

## ԱՍՊԵՐԳԵՐԻ ՀԱՄԱԽՏԱՆԻՇԻ ՖԵՆՈՄԵՆԸ

Սվաջյան Ա. Հ.

Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու

Գրիգորյան Ա. Լ.

Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի հայցորդ

**Հանգուցային բառեր և արտահայտություններ:** Ասպերգերի համախտանիշ, օժտված երեխա, ֆենոմենալ ուղեղ, հաղորդակցման դժվարություններ, անհատականության պահպանում:

Ներկայումս բազմաթիվ հետազոտողների ուշադրության կենտրոնում են տարաբնույթ գործոնների ազդեցության հետևանքով մարդու օրգանիզմում, այդ թվում՝ հոգեկանում առաջ եկող փոփոխությունները:

Նմանատիպ խնդիրների շարքին է դասվում 21-րդ դարի հիվանդություն համարվող և հրատապ լուծում պահանջող աուտիզմի համախտանիշը, վերջինիս ամբողջական ուսումնասիրումն ու բուժումը: Աուտիզմ ունեցող գրեթե բոլոր երեխաներին բնորոշ է հաղորդակցման խանգարում, հույզերի ոչ համարժեք ընկալում և արտահայտում, խոսքի բացակայություն կամ յուրահատուկ թերզարգացում, սակայն տարբեր են այս երեխաների ինտելեկտուալ հնարավորությունները: Աուտիզմին բնորոշ խանգարումների շարքում կարող են հանդիպել ինչպես պահպանված ինտելեկտով, այնպես էլ մտավոր զարգացման խանգարումներ կամ որոշակի ոլորտներում գերզարգա-

ցած ունակություններ ունեցող երեխաներ: Վերջին երևույթը կոչվում է բարձր ֆունկցիոնալ աուտիզմ կամ Ասպերգերի համախտանիշ:

Ասպերգերի համախտանիշ եզրույթն առաջարկվել է անգլիացի հոգեբույժ Լորնա Ուինգի (Lorna Wing) կողմից 1981թվականին: Համախտանիշը անվանվել է ավստրիացի հոգեբույժ և մանկաբույժ Հանս Ասպերգերի (Hans Asperger) պատվին: 1940-ական թվականներին Լեո Կանները և Հանս Ասպերգերը, իրարից անկախ աշխատելով (մեկը ԱՄՆ-ում, մյուսը՝ Ավստրիալիայում), առանձնացրեցին և ներկայացրեցին միանման խանգարման տեսակ, սակայն նրանց նկարագրությունները տարբերվում էին միմյանցից:

Այս համախտանիշի ուսումնասիրությունն առաջընթաց է ապրել վերջին տարիներին՝ հանձնես այն անձանց, ովքեր նկատեցին համախտանիշին բնորոշ գերընդունակությունները և սկսեցին նեկայացնել համախտանիշի նաև այդ կողմը:

Ըստ հիվանդությունների միջազգային 10-րդ դասակարգման, Ասպերգերի համախտանիշը ներկայացված է զարգացման ընդհանուր (պերվազիվ) խանգարումների

շարքում F 84.5 կողի ներքո, որտեղ այն բնութագրվում է հետևյալ կերպ.

#### **F 84.5 Ասպերգերի համախտանիշ**

Այս խանգարմանը բնորոշ են աուտիզմի ժամանակ հանդիպող սոցիալական փոխհարաբերությունների որակական նույն խանգարումները՝ սահմանափակ, միօրինակ, կրկնվող հետաքրքրությունների և հաղորդակցման խանգարում: Ի տարբերություն դասական աուտիզմի, այս դեպքում չկա խոսքի կամ ճանաչողական զարգացման ընդհանուր խանգարում կամ հապաղում: Երեխաների մեծ մասն ունի նորմալ զարգացած ինտելեկտ, բայց ճկունության նկատելի պակաս: Համախտանիշը հաճախ հանդիպում է տղաների մոտ (8:1 հարաբերությամբ): Այս խանգարումները հաճախ պահպանվում են նաև դեռահասության և հասուն տարիքում: Պատանեկան տարիքում հազվադեպ զարգանում են փսիխոտիկ երևույթներ [3]:

Ասպերգերի համախտանիշով մարդկանցից շատերը կարող են չափից դուրս սուր վերապրել իրենց ամենօրյա գործողությունների հաջողականության խախտումը, հիվանդագին զգայունություն ցուցաբերել բարձր ձայների և ուժեղ հոտերի նկատմամբ, կամ չսիրել, երբ իրենց դիպչում են, օրինակ՝ որոշ երեխաներ լուրջ դիմադրում են, երբ որևէ մեկը ուզում է շոյել նրանց գլուխը: Նրանք դժվարությամբ են ընկալում դիմացիկի ժեստերը և խոսքի հնչերանգը, խոսքի ենթատեքստը, այդ պատճառով էլ ամեն ինչ ընկալում են այնպես, ինչպես ասված է՝ ուղղակի:

Սակայն, այս ամենի հետ մեկտեղ, Ասպերգերի համախտանիշ ունեցող անձինք ունենում են որոշակի ուղղություններով գերընդունակություններ, որոնց շնորհիվ ճիշտ կազմակերպված աշակցության արդյունքում նրանք կարող են մեծ ձեռքբերումներ ունենալ իրենց հետաքրքրությունների սահմաններում: Այս համախտանիշն ունեցող երեխաները հաճախ ցուցադրում են իրենց տարիքին ոչ բնորոշ ունակություններ՝ լեզուների, կարդալու, մաթեմատիկայի, շրջապատող իրականության մասին, երաժշտության բնագավառներում, որը երբեմն հասնում է « հանճարեղության» աստիճանի: Օրինակ՝ Ասպերգերի համախտանիշ ունեցող երեխան կարող է իր երիտասարդ տարիքին համեմատ լինել հանճարեղ մաթեմատիկոս կամ աստղագետ /2/:

Ասպերգերի համախտանիշ ունեցող երեխաների թիվը ՀՀ-ում ճշտված չէ, սակայն այն հանգամանքը, որ այս երեխաներն ունեն անսովոր ունակություններ՝ անժխտելի է, միևնույն ժամանակ չենք կարող չխոսել նաև այն դժվարությունների մասին, որոնց հանդիպում են այս համախտանիշն ունեցող երեխաները ուսումնական գործընթացում:

Գիտահանրամատչելի գրականության մեջ ներկայացված են բազմաթիվ դեպքեր Ասպերգերի համախտանիշ ունեցող անձնանց յուրահատուկ ունակությունների մասին, որոնցով հանդերձ այս անձինք սոցիալական միջավայրում ունենում են մի շարք դժվարություններ: Դիտարկենք Ասպերգերի համախտանիշ ունեցող անձնանց ով մի քանի օրինակ՝ իրենց բնորոշ

գերընդունակություններով:

Առաջին անգամ օժտվածության կամ ֆենոմենալ ընդունակությունների մասին խոսել է Ջ. Լոնգոն Դաունը (1887թ): Գիտնականը նշել էր վերջինիս կապը զարմանալի, ապշեցուցիչ հիշողության մասին, երբ անձն առանց սխալների և բացթողումների ի վիճակի է անգիր արտասանել Էդուարդ Գիբբոնի «Հռոմեական կայսրության անկումն ու կործանումը» պատմությունը (Edward Gibbon, The Decline and Fall of the Roman Empire):

Ասպերգերի համախտանիշ ունեցող Կիմ Պիկի մասին 2006 թ-ին ամերիկյան գիտա-տեղեկատվական ամսագրի հերթական համարներից մեկում հրատարակվեց հոդված՝ «Ֆենոմենալ ուղեղ» վերնագրով, որտեղ նշվում էր, որ ամերիկացի Կիմը օժտված է բացառիկ հիշողությամբ /1/, որի պատճառով Կիմի ընկերները հումորով նրան անվանում էին Կիմ-այլուտեր: Նա կարողանում էր իր հիշողության միջից դուրս բերել որևէ նյութ այն արագությամբ, ինչ համացանցը: Նա գիտեր մոտ 9 հազար ստեղծագործություն և «կլանում էր» գրքի էջի նյութը ընդամենը 10 վրկում, իսկ գրքերը դնում էր պահարանի վերևի դարակում «ոտքերի» վրա՝ ցույց տալով, որ այն ընդմիշտ «ծայնագրվել է կոշտ սկավառակում»: Այս ամենի հետ մեկտեղ՝ Կիմն ուներ շատ լուրջ խղիրներ, որոնք բնորոշ են Ասպերգերի համախտանիշ ունեցող անձանց: Նա ուներ տարօրինակ քայլվածք, չէր կարողանում կոճկել իր հագուստը, ի վիճակի չէր կատարել հասարակ կենցաղային պարտականությունները, դժվարությամբ էր կողմնորոշվում վերացական իրավիճակ-

ներում: Կիմի գլուխն ու ուղեղը նկատելիորեն մեծ էին՝ համեմատած մարդկանց 99%-ին: Նրա մոտ բացակայում էր բրտամարմինը, որը նորմալում իրար է կապում աջ և ձախ կիսագնդերը: Որոշ շարժողական գործառույթների համար պատասխանատու ուղեղիկը սովորականից փոքր էր և ձևախեղված, որի միջոցով էլ կարելի է բացատրել Կիմի շարժողական խանգարումները: Ուղեղիկին շրջապատող տարածության մեծ մասը կազմված էր հեղուկից:

Ասպերգերի համախտանիշի վառ օրինակ է Կոլորադոյի համալսարանի պրոֆեսոր Տեմպլ Գրանդինը, ով հասել է մեծ հաջողությունների կենդանիների մասին լուրջ հետազոտություններ կատարելով:

Մեր պրակտիկան վերլուծելով նույնպես կարող ենք ներկայացնել Ասպերգերի համախտանիշ ունեցող մի քանի երեխաների օրինակներ:

7 տարեկան Արմանը, ով ուներ Ասպերգերի համախտանիշ այս տարիքում արդեն գրում և կարդում էր երեք լեզուներով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն, գիտեր ամբողջ գալակտիկան, երկիր մոլորակի ամբողջ քարտեզը, մարդու մարմնի բոլոր ոսկորներն ու մկանները: Սակայն այս գիտելիքներով հանդերձ Արմանը չէր կարողանում ընդգրկվել ուսումնական գործընթացում, մի քանի դպրոց հրաժարվել էին կազմակերպել նրա կրթությունը՝ վարքային խնդիրների պատճառով: Արմանը չէր կարողանում սոցիալական որևէ փոխհարաբերություն կառուցել, երկխոսությունը ձևավորված չէր, իր մասին խոսում էր երկրորդ դեմքով, հաճախ հար-

ցերին ի պատասխան ի հայտ էին գալիս էխոլալիաներ, քանի որ նա չէր կարողանում գտնել անհրաժեշտ պատասխանը և բառերը:

Մեկ այլ դեպք, Կարենը 6 տարեկան, գիտեր Երևան քաղաքի բոլոր արձանները, քանդակագործներին, նրանց կենսագրությունը, որ թվականին են տեղադրվել արձանները, գեղեցիկ ու յուրահատուկ լուսանկարում էր դրանք, սակայն նա մեծ դժվարություններ ուներ դպրոցում, չէր համագործակցում ուսուցիչների և համադասարանցիների հետ, հետ էր մնում ուսումնական կյանքից:

Կարենը, ով 12 տարեկան էր, ուներ արտասովոր մաթեմատիկական ունակություններ, մտովի կատարում էր բարդ թվաբանական գործողություններ, հաշվում օրացույցի օերը ըստ շաբաթվա օրերի, լուծում էր դժվար խնդիրներ, սակայն դպրոցական մաթեմատիկայի ծրագիրը դժվարությամբ էր յուրացնում, մեծ խնդիրներ ուներ հասակակցների հետ փոխհարաբերություններում, չէր ընկալում սոցիալական նորմերն ու կանոնները:

Ինչպես տեսնում ենք Ասպերգերի համախտանիշ ունեցող երեխաները թեև ունեն արտասովոր ունակություններ, այնուամենայնիվ նրանք մեծ դժվարություններ են ունենում դպրոցում ոչ միայն ուսում-

նական կյանքը յուրացնելիս, այլև ուսուցիչների ու հասակակիցների հետ փոխհարաբերություններ կառուցելիս, սոցիալական կանոնները պահպանելիս: Արդյունքում՝ նրանք երբեմն դուրս են մնում կրթությունից, կամ կրթության մեջ ներառվում են ձևականորեն և դպրոցը հաճախ նրանց ոչինչ տալ չի կարողանում:

Չեղարկությունները վկայում են, որ ժամանակին ու ճիշտ կազմակերպած աջակցության արդյունքում Ասպերգերի համախտանիշ ունեցող անձինք կարող են հասնել մեծ հաջողությունների, եթե իրենց հետաքրքրությունների շրջանակում ընտրեն մասնագիտություն: Այս համախտանիշ ունեցող մարդկանց հաճախ հրավիրում են կատարել հույժ կարևոր աշխատանքեր զինված ուժերում, գաղտնի գործակալություններում, նորագույն տեխնոլոգիաների հետազոտական ինստիտուտներում:

Կարծում ենք, որ ներառական կրթություն իրականացնող դպրոցներում աշխատող մանակավարժներին այս ամենի մասին իրազեկելը ունի կարևոր նշանակություն և կորդի նրանց առավել լրջորեն և պատրաստակամորեն մոտենալ Ասպերգերի համախտանիշ ունցող երեխաների հետ կազմակերպվող աշխատանքներին:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Дерольд Трефферт, Дэниел Кристинсен “Феноменальный мозг”, “В мире науки” ежемесячный научно - информационный журнал, №3 2006, 61-65 с.
2. И.И.Мамайчук “Психокоррекционные технологии для детей с

- проблемами в развитии”, Психологический практикум, 165-190 с.
3. <http://www.who.int/classifications/icd/>

## **РЕЗЮМЕ ФЕНОМЕН СИНДРОМА АСПЕРГЕРА**

**Сваджян А.О.**

Доцент кафедры специальной педагогики и психологии Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна, кандидат педагогических наук

**Григорян А.Л.**

Соискатель кафедры специальной педагогики и психологии Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна

В статье представлены исследования особенностей и феноменальных возможностей одной из разновидностей аутизма- синдро-

ма Аспергера, об их необходимой определенной роли в обществе.

## **SUMMARY**

### **THE PHENOMEN OF ASPERGER'S SYNDROME**

**Svajyan A.**

Associate professor Chair of Special Pedagogy and Psychology Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan, Candidate of Pedagogical sciences

**Grigoryan A.**

Reasercher student Chair of Special Pedagogy and Psychology Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan

In the article presents the research of features and phenomenal features a variety of autism, Asperger's syndrome typical and raised the

question of their identity and the need to give the opportunity to take on a role in the environment.